

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2012 թ. մայիսի 7-11-ը ՀՀ ԱՎԾ-ում էր գտնվում Դանիայի վիճակագրության ծառայության բիզնեսի զարգացման բաժնի գլխավոր խորհրդատու Մարտին Լունդոն՝ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» ծրագրի ներքո,
- ✓ 2012թ. մայիսի 14-18-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակի գների վիճակագրության բաժնի պետ Լևան Կարսաուլիձեն, գների վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետներ Նանա Ծիկլաուրին և Մայա Չելիձեն՝ «Միջազգային համադրումներ» ծրագրի ներքո,
- ✓ 2012թ. մայիսի 15-23-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Արժույթի միջազգային հիմնադրամի ազգային հաշիվների գծով մասնագետ Մարիա Մանչևան՝ «Ազգային հաշիվների համակարգի կատարելագործում» ծրագրի ներքո,
- ✓ 2012թ. մայիսի 29-31-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) փորձագետ Սիվ-Իրենե Պեդերսենը՝ ընթացիկ և ապագա ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրերի, վարչական ռեգիստրների որպես տեղեկատվական աղբյուր օգտագործման և այլ հիմնահարցերի շուրջ քննարկումների նպատակով,
- ✓ 2012թ. հունիսի 25-ին ՀՀ ԱՎԾ-ում էր ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական բաժնի տարածաշրջանային խորհրդատու Գաբրիել Գամեսը՝ Հայաստանում վիճակագրական ներուժի ամրապնդման ընթացիկ իրավիճակի և ապագա համագործակցության շուրջ քննարկումների նպատակով,
- ✓ 2012թ. հունիսի 25-29-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Շվեդիայի վիճակագրական ծառայության գլխավոր խորհրդատու Ռոլֆ Սելանդերը և Դանիայի վիճակագրության ծառայության գյուղատնտեսության վիճակագրության ենթաբաժնի պետ Մոնա Լարսենը՝ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Գյուղատնտեսության համատարած հաշվառում» բաղադրիչի շրջանակում: